26.10.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հոկտեմբերի 2020 թվականի N 1716 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 662-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթը հաստատելու մասին» N 662-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7.10-րդ, N 3 հավելվածը՝ 9.16-րդ, N 4 հավելվածը՝ 8.14-րդ, N 5 հավելվածը՝ 8.12-րդ, N 6 հավելվածը՝ 8.13-րդ, N 7 հավելվածը՝ 8.13-րդ, N 11 հավելվածը՝ 8.10-րդ, N 12 հավելվածը՝ 8.12-րդ, N 13 հավելվածը՝ 8.7-րդ, N 14 հավելվածը՝ 8.8-րդ, N 15 հավելվածը՝ 8.8-րդ, իսկ N 16 հավելվածը՝ 8.7-րդ կետերով.

	Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցն ունի սանիտարական անձնագիր:				5	փաստաթղթային զննում	«Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մաս	

2) որոշումը լրացնել նոր «Մնդամթերքի հետ շփվող փաթեթվածքի անվտանգության ստուգման վերաբերյալ» N 17 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ